1	**Ազատագրական խմբակները և կազմակերպությունները:**	**Վ5.** Նկարագրել տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկիզբին, ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի պատմական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները: **Վ6.** Ներկայացնել խմբակների գործունեությունը և ճանաչել ակնառու պատմական գործիչների գործնեությունը:
2	**Հայ ազգային կուսակցությունները:**	**Վ7.**Ներկայացնել կուսակցությունների գործունեությունը, ծրագրերը և ճանաչել ակնառու պատմական գործիչների գործնեությունը:
3	**Հայդուկային շարժումը:**	**Վ8.**Ներկայացնել հայդուկային շարժման առաջացման պատճառները, էությունը, նշանավոր հայդուկապետերին և նրանց ձեռնարկները, գնահատել հայդուկային պայքարի դերն ու նշանակությունը հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ:
4	**Արևմտահայերի կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը 1890-ական թթ.:**	**Վ9.**Ներկայացնել 1890-ական թթ. հայերի կոտորածները, դրանց նկատմամբ մեծ տերությունների անտարբերության պատճառներն ու հետևանքները, ներկայացնել 1894-1896թթ. ինքնապաշտպանական մարտերը, արդյունքներն ու հետևանքները:
5	**Ազատագրական պայքարը Արևմտյան Հայաստանում:**	**Վ10.**Ներկայացնել XX դարի սկիզբի ազատագրական պայքարի (Ս.Առաքելոց վանքի կռիվ,Սասունի 1904թ ապստամբություն) արդյունքները, ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ:
6	**Համազգային պայքարը:**	**Վ11.**Ներկայացնել պետության բացակայության պայմաններում, հայոց եկեղեցու ազգապահպան դերը, ձեռնարկումները, ռուսական իշխանությունների կողմից Հայոց եկեղեցու իրավունքների ոտնահարումը (1903թ. հունիսի 12-ի օրենքը), **Վ12.**Ներկայացնել հայ-թաթարական բախումների պատճառները,նկարագրել ընթացքը, ինքնապաշտպանական պայքարի կազմակերպման նպատակով իրականացրած գործունեությունը:

7	**Արևմտահայությունը Առաջին աշխարհամարտի նախօրեին:**	**Վ13.** Ներկայացնել երիտթուրքական հեղաշրջումը՝ վերլուծելով հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը և մասնակցությունը, երիտթուրքական ծրագրերը և հայերի բնաջնջման գործողությունները, հետևանքները: Նկարագրել քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ թուրքական քաղաքականության փոխակերպումները՝ վերլուծելով պանօսմանիզմի, պանիսլամիզմի և պանթյուրքիզմի գաղափարախոսությունները:
8	**Համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատը:**	**Վ14.** Ներկայացնել 1912-1914 թթ- հայկական հարցի գործընթացները, բանակցությունները, ընդունված կետերը: **Վ15.** Նկարագրել կամավորական ջոկատների գործնեությունը, անցած մարտական ուղին, զորահրամանատարներին:
9	**Հայոց մեծ եղեռնը :**	**Վ16.** Ներկայացնել հայերի ցեղասպանության պատճառները, ծրագիրը, կազմակերպիչներին և ընթացքը: Նկարագրել հայերի ցեղասպանության վերաբերյալ պետությունների, անհատների և կազմակերպությունների արձագանքը: Սահմանել «ցեղասպանություն» եզրույթը, ներկայացնել դրա դատապարտման ընթացքը (քրեականացումը) որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Վերլուծել և գնահատել ցեղասպանության հետևանքները:
10	**Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915թ:**	**Վ17.**Ներկայացնել 1915-1916թթ ինքնապաշտպանական մարտերը, յուրաքանչյուրի առանձնահատկությունները, արդյունքներն ու հետևանքները, ցույց տալ ազգային, հասարակական, հոգևոր և անձնական շահերի միասնականության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում: **Վ18.**Նկարագրել Նեմեսիս ծրագիրը, վրիժառուների գործողությունները և ժամանակագրությունը:
11	**Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը:**	**Վ19**.Նկարագրել Փետրվարյան հեղափոխությունից Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Այսրկովկասում ստեղծված իրադրությունը, Բրեստ Լիտովսկու պայմանագիրը կարևոր իրադարձությունները ու

		փաստերը։Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականությունը և նոր իրադրության պայմաններում հայ-ռուսական հարաբերությունները։
12	**Մայիսյան փառահեղ հերոսամարտերը։**	**Վ20.**Նկարագրել Մայիսյան հերոսամարտերը, ռազմաճակատները, գործիչներին, կարևորագույն իրադարձություններն ու փաստերը։ **Վ21.** Բացատրել կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները։